

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 11-01-2023 թ. որոշմամբ
 «ՎԻՉՈՒԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Ց ՈՒ Ն
 հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՎԻՉՈՒԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ 4	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1153268	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2020-11-26	
1.5 ՀՎՀՀ-ն	01021075	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)93699093	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://visualarmenia.org/	
1.8 Էլեկտրոնային փոստը	vaf.sona.markosyan@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Արևիկ Ավետիսյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հովհաննես Ղազարյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	10	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կրթական	120,209,072
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
9.2 Գույք		

10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Աշխարհացույց — ինտերակտիվ քարտեզ	73,290,371	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	97,195,750	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	73,290,371	

Նշումներ՝

«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամը ստեղծվել է 2020 թ.-ին՝ Արցախյան աղետալի պատերազմից անմիջապես հետո: Հիմնադրամի առաքելությունն է գտնել նոր լուծումներ հին խնդիրների համար, որոնք անկախությունից ի վեր խոչընդոտում են Հայաստանի կայուն զարգացմանը: Հիմնադրամը նպատակադրված է մշակել ծրագրեր, որոնք համակարգային կերպով կարձագանքեն կրթության, սոցիալական և տնտեսական կյանքի, առողջապահության, շրջակա միջավայրի և այլ ոլորտներում առկա մարտահրավերներին:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն
իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Վիզուալ Հայաստան» Ջարգացման Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

**«Վիզուալ Հայաստան» Ջարգացման Հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ	9
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ	10



«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/3, 7-րդ հարկ
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 11 96 77 77

“IFP” LLC
49/3 Komitas Av., 7th floor, Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 11 96 77 77
www.ifp.am

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վիզուալ Հայաստան» Զարգացման Հիմնադրամի Ղեկավարությանը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Վիզուալ Հայաստան» Զարգացման Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք

կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր առմամբ ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք ղեկավարությանը և կառավարման օղակներում ներգրավված անձանց հաղորդակցում ենք աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, ներառյալ աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին հսկողության կարևոր թերությունների վերաբերյալ:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու աուդիտորն է՝

Ռոզա Հարությունյան

Ղեկավար աուդիտոր

«Այ Էֆ Փի» ՍՊԸ

Տնօրեն

Աշոտ Բարսեղյան

15 հունիս, 2023թ.



«Վիզուալ Հայաստան» Զարգացման Հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2022 հազ. դրամ	31.12.2021 հազ. դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	2,771	3,353
Ոչ նյութական ակտիվներ	9	92,494	20,696
		<u>95,265</u>	<u>24,049</u>
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	19,102	16,105
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	43,863	31,860
		<u>62,965</u>	<u>47,966</u>
Ընդամենը ակտիվներ		<u>158,230</u>	<u>72,015</u>
 Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Կուտակված հավելուրդ (պակասուրդ)			
		(236)	(236)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	95,265	24,049
		<u>95,265</u>	<u>24,049</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	2,351	643
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	60,850	47,560
		<u>63,201</u>	<u>48,203</u>
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		<u>158,230</u>	<u>72,015</u>

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6 - 25) հաստատվել են ղեկավարության կողմից 15.06.2023թ., ստորագրությամբ

Հովհաննես Ղազարյան
Գործադիր տնօրեն



Սոնա Մարկոսյան
Գլխավոր հաշվապահ

«Վիզուալ Հայաստան» Ջարգացման Հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2022	2021
	հազ. դրամ	հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր դրամաշնորհներից	47,991	36,378
Վճարումներ գնումների դիմաց	(21,381)	(20,871)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,366)	(12,677)
Այլ ելքեր	(1,221)	(294)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	23,023	2,536
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված դրամաշնորհներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար	72,218	25,095
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման դիմաց վճարումներ	(72,218)	(25,095)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	23,023	2,536
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	(11,020)	(1,710)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	31,860	31,034
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	43,863	31,860

«Վիզուալ Հայաստան» Ջարգացման Հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

1	Հիմնադրամի մասին	10
2	Պատրաստման հիմունքներ	11
3	Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ	16
4	Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում	18
5	Շնորհներից եկամուտներ	20
6	Վարչական ծախսեր	20
7	Արտարժույթի վերագնահատումից օգուտ/վնաս	21
8	Հիմնական միջոցներ	21
9	Ոչ նյութական ակտիվներ	21
10	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	21
11	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22
12	Ակտիվներին վերաբերող շնորհներ	22
13	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22
14	Եկամուտներին վերաբերող շնորհներ	22
15	Կապակցված կողմերի հետ գործարքներ	22
16	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	22
17	Պայմանական դեպքեր	25

1. Հիմնադրամի մասին

1.1 Հիմնադրամը և նրա հիմնական գործունեությունը

«Հայրենիքի վերականգման և զարգացման» Հիմնադրամը (հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային հիմնադրամ է: Այն գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2020 թվականի նոյեմբերի 26-ին, գրանցման համարը՝ 222.160.1153268:

Հիմնադրամի կանոնադրության մեջ 2021 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել փոփոխություն՝ «Հայրենիքի վերականգման և զարգացման» հիմնադրամ բառերը փոխարինվել է «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ բառերով:

Հիմնադրամը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական, ստեղծագործական, նորարարական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամը գործում է ՀՀ սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի համաձայն:

Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները.

- Մշակել ծրագրեր, որոնք համակարգային կերպով կարձագանքեն կրթության, սոցիալական և տնտեսական կյանքի, առողջապահության, շրջակա միջավայրի և այլ ոլորտներում առկա մարտահրավերներին,
- Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս՝ սփյուռքում, մշակել և իրականացնել սոցիալական, մշակութային, կրթական, գիտական, նորարարական, ստեղծագործական, առողջապահական, բնապահպանական և այլ ծրագրեր միտված հայրենիքի վերականգնմանն ու զարգացմանը, ինչպես նաև աջակցել նմանօրինակ ծրագրերի իրականացմանը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը.

- Խորհրդի նախագահ՝ Մոնա Հովհաննիսյան,
- Խորհրդի անդամ՝ Աշոտ Պետրոսյան,
- Խորհրդի անդամ՝ Վահագն Ջավախյան,

Գործարար միջավայր

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը բիզնես միջավայրում:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունք

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն: ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ստանդարտներն ու մեկնաբանություններն են: Դրանք բաղկացած են

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 3-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Անցման ամսաթվի դրությամբ Հիմնադրամը ճանաչել է այն բոլոր ակտիվները և պարտավորությունները, որոնք ճանաչվում են ՖՀՄՍ-ներով:

2.2 Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր, պայմանագրի կատարման արժեքը, Հղում հայեցակարգային հիմունքներին. ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՖՀՄՍ 1-ին, ՖՀՄՍ 9-ին, ՖՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը *ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը՝* ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով: Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է *պայմանագրի կատարման գծով ծախսեր* հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:

ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի Ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՍԽ (IFRIC) 21-ին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% թեստի կազմում»՝ ֆինանսական պարտավորությունների

ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հոգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% թեստի կազմում»:

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվները և պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեին մայր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը: ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո գեղջված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՖՀՄՍ 16-ի «COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնությունների փոփոխություն» (թողարկված է 2020 թ. մայիսի 28-ին և ուժի մեջ է մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունը վարձակալներին տրամադրում է ընտրություն ցանկության դեպքում ազատվել գնահատելու գործընթացից, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնությունն իրենից ներկայացնում է վարձակալության ձևափոխություն: Վարձակալները կարող են ընտրել վարձակալության արտոնությունների համար նույն հաշվառումը, կարծես դրանք վարձակալության փոփոխություններ չլինեին: Գործնական նպատակահարմարությունը վերաբերում է միայն այն վարձակալական արտոնություններին, որոնք տեղի են ունենում որպես COVID-19 համավարակի անմիջական հետևանք և միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները. վարձակալության վճարների փոփոխությունը հանգեցնում է վարձակալության վերանայված հատուցման, որը էապես նույնն է, կամ պակաս է, քան վարձակալության հատուցումը անմիջապես փոփոխությունից առաջ, վարձակալության վճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021 թվականի հունիսի 30-ին կամ դրանից առաջ մարվող վճարումների վրա. և վարձակալության այլ պայմանների բովանդակային փոփոխություն տեղի չի ունեցել: 2021 թվականի մարտի 31-ին, շարունակվող համավարակի պայմաններում, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակեց լրացուցիչ փոփոխություն՝ զիջումների ժամկետը երկարաձգելով 2021 թվականի հունիսի 30-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը (ուժի մեջ է 2021 թվականի ապրիլի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Հետևյալ ստանդարտների փոփոխություններն ուժի մեջ են մտել 2021թ. հունվարի 1-ից, բայց որևէ էական ազդեցություն չունեն Հիմնադրամի վրա:

Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Թողարկվել են նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք պարտադիր են 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և որոնք Հիմնադրամն ավելի վաղ չի ընդունել:

ՖՀՄՄ 17 Ապահովագրական պայմանագրեր (թողարկված է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՄ 17-ը փոխարինում է ՖՀՄՄ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը, ինչը դժվարացնում էր մնացած առումներով համանման ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների համեմատությունը և համադրությունը ներդրողների համար: ՖՀՄՄ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում՝ վերապահովագրության պայմանագրերի հաշվառումն իրականացնելու համար:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՖՀՄՄ 17-ի և ՖՀՄՄ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՄ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՄ 17 -ի ութ ոլորտներին և չեն փոխում ստանդարտի հիմնարար սկզբունքները:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև. ՖՀՄՄ 10-ի և ՀՀՄՄ 28-ի փոփոխություններ (հրապարակվել է 2014թ. սեպտեմբերի 11-ին և ուժի մեջ մտնելը հետաձգված է անորոշ ժամկետով): Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՄ 10-ի և ՀՀՄՄ 28-ի պահանջների միջև առկա հակասություններին, որոնք վերաբերում են ակտիվների վաճառքին կամ ներդրմանը՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև: Փոփոխությունների հիմնական հետևանքն է, որ ամբողջական շահույթը կամ վնասը ճանաչվում է, երբ գործարքը ներառում է ձեռնարկատիրական գործունեություն: Մասնակի շահույթը կամ վնասը ճանաչվում է, երբ գործարքը ներառում է ակտիվներ, որոնք ձեռնարկատիրական գործունեության մաս չեն կազմում, նույնիսկ եթե այդ ակտիվները պահվում են դուստր ձեռնարկությունների կողմից:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՄ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով դեկավարության

ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները:

Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ - Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (թողարկված են 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է ընկերությունները տարբերեն հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններից:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ - Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (թողարկված են 2021թ. փետրվարին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխության նպատակն է մեծացնել ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների աստիճանը: Փոփոխության համաձայն՝ կազմակերպությունները պետք է համակարգված և կառուցվածքային կերպով բացահայտեն իրենց հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունը, մասնավորապես

- կազմակերպության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրությունը, որը առնչվում է ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությանը,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ, ղեկավարության կողմից կայացված այն դատողությունների մասին տեղեկատվություն, որն ամենաէական ազդեցությունն ունի ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա,
- հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի էական ճշգրտումներ զգալի ռիսկ առաջացնող, ղեկավարության կողմից արված ենթադրությունների մասին տեղեկություններ,
- ժամանակաշրջանի ընթացքում հաշվապահական հաշվառման քաղաքականության ցանկացած փոփոխության և ֆինանսական հաշվետվությունների վրա այդ փոփոխությունների ազդեցության մասին տեղեկատվություն. և
- փոխադարձ հղումներ ֆինանսական հաշվետվություններում այլ բացահայտումներին, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Մեկ գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր – ՀՀՄՍ 12-ի փոփոխություններ (տրամադրվել է 2021թ. մայիսի 7-ին և ուժի մեջ է 2023 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները սահմանում են, թե ինչպես հաշվառել հետաձգված հարկն այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապատեղակայման և քանդման պարտավորությունները: Փոփոխությունները պահանջում են, որ ընկերությունները ճանաչեն հետաձգված հարկն այն գործարքների նկատմամբ, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ առաջացնում են հավասար չափով հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Վարձակալության պարտավորություն վաճառք հետադարձ վարձակալության գործարքում ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ (հրապարակվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունը պարզաբանում է, որ երբ վաճառող-վարձակալը լիզինգային գործարքը հաշվառում է որպես վաճառք և վարձակալություն, վաճառող-վարձակալը պետք է ճանաչի վարձակալության պարտավորությունը այնքանով, որքանով լիզինգը վարձակալություն է: Եթե վարձակալության վերադարձը վարձակալություն չէ, ապա վաճառող-վարձակալը պետք է ճանաչի ստացված ցանկացած հատուցում որպես եկամուտ:

Փոփոխությունը նաև պահանջում է, որ վաճառող-վարձակալը որոշի այն ակտիվի հաշվեկշռային արժեքը, որը ենթակա է վարձակալության՝ բաշխելով ակտիվի և վարձակալության պարտավորության միջև գործարքից ստացված հասույթը՝ ելնելով գործարքի ամսաթվի դրությամբ դրանց համապատասխան իրական արժեքներից: Փոփոխությունն ուղեցույց է տալիս ակտիվի և վարձակալության պարտավորության համապատասխան իրական արժեքները որոշելու վերաբերյալ:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (հրապարակվել է 2022թ. հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխություններն ուղեցույց են տալիս այն մասին, թե ինչպես դասակարգել ոչ ընթացիկ պարտավորությունները, որոնց կովենանտները խախտված են՝ որպես ընթացիկ թե ոչ ընթացիկ: Մասնավորապես, փոփոխությունները պահանջում են, որ կազմակերպությունը գնահատի, արդյոք կովենանտի խախտումը վերացվել կամ չեղարկվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Եթե խախտումը վերացվել է կամ հանվել է հաշվետու ամսաթվի դրությամբ, պարտավորությունը պետք է դասակարգվի որպես ոչ ընթացիկ: Եթե խախտումը չվերացվի կամ չեղարկվի հաշվետու ամսաթվի դրությամբ, պարտավորությունը պետք է դասակարգվի որպես ընթացիկ:

Փոփոխությունները նաև պահանջում են, որ կազմակերպությունը բացահայտի կովենանտի խախտման բնույթն ու չափը, ինչպես նաև ցանկացած այլ գործոն, որը հաշվի է առնվել պարտավորությունը դասակարգելիս:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի

փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են դեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի դեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

Իրական արժեքի չափում

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում ներառված որոշ ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտում:

Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող էլակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող էլակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

- Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2. Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի էլակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր
- Մակարդակ 3. Ոչ դիտարկելի էլակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի էլակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

Կազմակերպությանը պատկանող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հավասարվում է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունը աննշան է:

Պաշարների գուտ իրացվելի արժեքի գնահատում

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դիտարկում է արդյոք պաշարների գուտ իրացվելի արժեքը պակաս չէ դրանց ձեռքբերման արժեքից և նման դեպքերի հայտնաբերման դեպքում պաշարները չափում է դրանց գուտ իրացվելի արժեքով: Գնահատումները հիմնվում են հետհաշվեկշռային ժամանակահատվածի ուսումնասիրության, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ Հիմնադրամի ղեկավարության ակնկալիքների վրա:

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիության գծով հաշվապահական հաշվառման գնահատումները կապվում են վարկունակության հետ: Ծանոթագրություն 4-ում անդրադարձ է կատարվում ֆինանսական ակտիվների և դրանց թվում դեբիտորական պարտքերի ռիսկերի գնահատմանը:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Շուկայական ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

	Ծնթ.	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
<i>Անորոշագույն արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	43,863	31,860
		43,863	31,860

Ֆինանսական պարտավորություններ

	Ծնթ.	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
<i>Անորոշագույն արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	13	30	58
		30	58

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ստացված փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Հիմնադրամի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև ժամկետային ավանդներից:

Պարտքային ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը սահմանափակվում է Հիմնադրամի վերոհիշյալ ֆինանսական ակտիվներով, որոնք ամբողջությամբ ծածկել են ներքին շուկայից:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Հիմնադրամի արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Հիմնադրամը հակված չէ շուկայական ռիսկի ազդեցությանը:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Հիմնադրամի գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով, այսինքն՝ երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից, որոնք, ի սկզբանե արտահայտված են եվրոյով և ԱՄՆ դոլարով:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	<u>31.12.2022թ.</u>	<u>31.12.2021թ.</u>
1 Եվրո	393.57	542.61
1 ԱՄՆ դոլար	420.06	480.14

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ վերջինս պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի առնվազն 90 օրվա ընթացքում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

5. Շնորհներից եկամուտներ

	<u>2022</u>	<u>2021</u>
	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	1,002	1,046
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	12,245	17,907
	<u>13,247</u>	<u>18,953</u>

6. Վարչական ծախսեր

	<u>2022</u>	<u>2021</u>
	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
Աշխատավարձ և այլ փոխհատուցումներ	5,051	9,215
Վարձակալության	8,689	7,800
Հիմնական միջոցների մաշվածություն և ամորտիզացիա	1,002	1,046
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,625	-
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	602	511
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	536	476
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	2,261	44
Բանկային ծառայություններ	95	-
Այլ	55	54
	<u>19,916</u>	<u>19,146</u>

7. Արտարժույթի վերագնահատումից օգուտ/վնաս

	2022	2021
	հազ. դրամ	հազ. դրամ
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտ	22,654	1,945
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախս	(11,211)	(1,710)
	<u>11,443</u>	<u>235</u>

8. Հիմնական միջոցներ

	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական, տնտեսական գույք	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Սկզբնական արժեք			
Առ 1 հունվար 2021	-	-	-
Ավելացումներ	1,006	3,383	4,389
Առ 31 դեկտեմբեր 2021 և 1 հունվար 2022	<u>1,006</u>	<u>3,383</u>	<u>4,389</u>
Ավելացումներ	395	-	395
Առ 31 դեկտեմբեր 2022	<u>1,401</u>	<u>3,383</u>	<u>4,784</u>
Կուտակված մաշվածություն			
Առ 1 հունվար 2021	-	-	-
Ավելացումներ	779	257	1,036
Առ 31 դեկտեմբեր 2021 և 1 հունվար 2022	<u>779</u>	<u>257</u>	<u>1,036</u>
Ավելացումներ	554	423	977
Առ 31 դեկտեմբեր 2022	<u>1,333</u>	<u>680</u>	<u>2,013</u>
Զուտ հաշվեկշռային արժեք			
Առ 1 հունվարի 2021	-	-	-
Առ 31 դեկտեմբեր 2021	227	3,126	3,353
Առ 31 դեկտեմբեր 2022	<u>68</u>	<u>2,703</u>	<u>2,771</u>

9. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներն իրենցից ներկայացնում են նոր ստեղծվող, մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվ (ինտերակտիվ քարտեզ) և համակարգչային ծրագիր հետևյալ սկզբնական արժեքներով՝ 92,280 և 250 ՀՀ դրամ՝ արտահայտված հազարներով:

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2022թ. հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Կանխավճարներ ստացվելիք ծառայությունների գծով	19,102	12,838
Դեբիտորական պարտք հարկերի գծով	-	2,894
Դեբիտորական պարտք աշխատավարձի գծով	-	373
	<u>19,102</u>	<u>16,105</u>

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2022 հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	6,277	2,637
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	37,586	29,223
	43,863	31,860

12. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2022թ. հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվար	24,049	-
Վերադասակարգում եկամուտներին վերաբերող շնորհներից	72,218	25,095
Շնորհից եկամտի ճանաչում	(1,002)	(1,046)
Մնացորդ առ 31 դեկտեմբեր	95,265	24,049

13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2022 հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	30	58
Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի գծով	359	13
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	1,962	572
	2,351	643

14. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	31.12.2022 հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվար	47,560	31,034
Ստացված շնորհներ ընթացիկ տարվա ընթացքում	120,209	61,473
Շնորհից եկամտի ճանաչում	(12,245)	(17,907)
Փոխարժեքային տարբերություն	(22,456)	(1,945)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին	(72,218)	(25,095)
Մնացորդ առ 31 դեկտեմբեր	60,850	47,560

15. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Գործարքներ ղեկավարության հետ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը կազմել են 2022թ. համար 16,393 հազ. դրամ (2021թ. համար՝ 9,830 հազ. դրամ):

16. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Հիմնադրամի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Հիմնադրամի կողմից:

Արտարժույթով գործարքներ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գերիշխող փոխարժեքով: Որոշակի ամսաթվի դրությամբ գերիշխող փոխարժեքների սահմանման դեպքում հղում է արվում ՀՀ կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքներին: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրումների հեջավորման պահանջներին համապատասխանող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և վերափոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Վաճառքի համար մատչելի դրամային ակտիվների վերափոխարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները համարվում են իրական արժեքի փոփոխության առանձին տարր և ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ոչ դրամային ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները կազմում են ֆինանսական գործիքի գծով ճանաչված ընդհանուր շահույթի կամ վնասի մասը:

Կարճաժամկետ վարձակալություններ

Հիմնադրամը վարձակալել է գրասենյակային տարածք: Պայմանագրի գործողության ժամկետը մեկ տարուց պակաս է: Հիմնադրամը կիրառել է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտի գործնական մոտեցումը՝ չճանաչելու ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալության պարտավորություններ 12 ամիս կամ պակաս ժամկետով կնքված վարձակալությունների մասով: Հիմնադրամը ճանաչում է վարձակալության վճարումները շահույթում կամ վնասում՝ գծային մեթոդով վարձակալության ժամկետի ողջ ընթացքում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հիմնական միջոցներ	Տարի	Հաշվարկման մեթոդ
Մեքենաներ, սարքավորումներ	8	գծային
Արտադրական, տնտեսական գույք	8	գծային
Համակարգչային տեխնիկա	1	գծային

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

- ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),
- բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
- գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Շնորհներ

Շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավորված երաշխիք, որ շնորհները ստացվելու են և բոլոր կից պայմանները կատարվելու են: Երբ շնորհը վերաբերում է ծախսային հոդվածին, այն ճանաչվում է եկամուտ այն ժամանակաշրջանների ընթացքում, որոնցում շնորհը պարբերական հիմունքով անհրաժեշտ է համապատասխանեցնել նախատեսված հատուցվող ծախսերին: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից և հետաձգված հարկից:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման/(փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ:

Հիմնադրամի հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները եւ հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող եւ նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) եւ չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:

Ժամանակավոր տարբերությունների հետեւանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների եւ հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջեւ ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերություն

17. Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Հիմնադրամի գործունեության հետևանքով:

Դատական հայցեր

2022թ. դեկտեմբերի 31-ի և այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Տրված երաշխավորություններ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը տրամադրած երաշխավորություններ չի ունեցել: